Զ

«Ձեռագիրը մանրանկարչության տեսակետով էլ առաջնակարգ արժեք ունի,— գրում է Գարեգին Հովսեփյանը,— որտեղ կան բազմաթիվ գծանկարչական և զարդարանքի, և արևելյան կենդանական և բուսական ու թռչունի օրինակներ... Ամբողջն ուշադրության արժանի հայ-արաբ և սելջուկյան արվեստների համեմատության տեսակետով»[71]: Առաջնակարգ մանրանկարչության ուսումնասիրությունը թողնելով մասնագետներին, մի քանի նկատողություններ անենք ծաղկողի անձի և տեղի վերաբերյալ: Գ. Հովսեփյանը գրում է. «Ձեռագիրն ամբողջությամբ չի գրված և նկարազարդված Առաքելոց վանքում»[72]: Այս նշանակում է նաև, որ այն, ըստ երևույթին, մասամբ գրված և նկարազարդված է Առաքելոց վանքում, մասամբ էլ մի ուրիշ վայրում: Տարբեր վայրերը ենթադրում են նաև տարբեր ծաղկողներ, ինչպես կարծում են ոմանք: Լ. Դուրնովոն ուղղակի գրում է. «Նկարազարդված է Մուշում»[73]: Վերը ցույց տվեցինք, որ այն գրված և նկարազարդված է Ավագ վանքում: Մի քիչ ավելի պատճառաբանենք:

452ա էջի երրորդ սյունակի գլխազարդում զարդագրված է «Ստեփաննոս» անունը (տե՛ս նկ. 1): Ոչ մի կասկած չկա, որ ծաղկողն իր անունն է գրել այդ-

Նկար 1

տեղ, որովհետև այն ո՛չ գրչինն է (Վարդան), ո՛չ էլ ստացողինը (Աստուածատուր), որոնց անունները (հատկապես վերջինի) կարող էր նկարիչը այդպես ծաղկագրել: Ստեփաննոսը Տօնականի սկիզբը զարդարել է գեղեցիկ մեծ խորանով, որը կանգնած է մինչև ստորին լուսանցքը հասնող չորս զարդասյուների վրա: Երրորդ զարդասյունը միաժամանակ Ի զարդագրի հիմնական գիծն է հանդիսանում: Խորանի վերևում դեմ-դիմաց կանգնած են երկու զույգ վայրի այծ և եղջերու: Խորանի դիմացի ամբողջ էջը նկարազարդ է:

Խորանի աջ և ձախ լուսանցքներում «Ստեփաննոս» զարդագրերի տառաձևերով, բայց միագույն կարմիրով, վերից վար գրված է «Աստուած վայելել տացէ պատրոն Աստուածատրո եւ հաւատարիմ ազգի աստուածասէր անձանց եւ

71 Ցիշատակարանք, Ա, էջ 722, ծանոթ. 2:

72 Անդ, էջ 722—3:

73 «Հին Հայկական մանրանկարչություն», Երևան, 1952, նկ. 13-ի բացատրությունը: